զտարէգիրք,[1] զկոչումն ընծայութ՟ և զթումա գիրքն. սոքա

48. ս՞ք ամէն շնորհեաց յաթոռին։ Ա՛ծ ողորմի ն՞ր. իւր հոգին լուսաւորէ ամէն։

Եւ,[2] ք՝ս ա՞ծ, անճառելի լուսովն և անթառամ[3] պսակաւ պսակեսցես զտ՞ր դաւիթ կթ՛կոսի հոգին ընդ սրբոց հայրապետացն։ Յոնանու[4] աւետարանչին և ոսկի բերանին դասակից, փառակից և խորանակից արասցէ հանդերձ բարի ծնօղօքն և ա՞մ ազգականօք ամէն. և դուք լի բերանօք ա՞ծ ողորմի ասացէք տէր դաւիթ կ՞թկոսին. և ա՞ծ ձեզ ողորմի և ձեր ծնօղացն. ամէն եղիցի եղիցի։

Այլ[5] և եղեալ ի բարի յարմատոյն գագկայ տէր[6] զաքարիայ[7] կ՞թկոսն, եղբօրորդի տ՞ր դաւթին, և ամիրա կուրջ բէկին արգլմսեհին։ Գերագոյն էին քան մեծ տ՞ր զաքարէն, շինեաց յաղթամար քաղաքի մէջն եկեղեցի մի յանուն ս՞բ ա՞ծածին, և ստ՞փաննոսն. և մեծ այսմաւուրք մի, և յետոյ գնաց յէջմի

ած

46.[8] ածին և եբեր Աջն լուսաւորչին ի յաղթամարս բազում զօրօք և եղև ուրախութ՞ն Հայոց ազգին։ Գնաց յետոյ յէջմիածին և օրհնեաց զարք Ե՛պոսն և զհեզահոգի Տ՞ր Ստեփաննոս։ Եւ մնաց ամիս յաւել կամ պակաս. յետոյ դեղ տուեալ չարաոգիք[9] հայոց կ՛թկոսին և այնու բարձին աշխարհէ, և մեծ սուք

---

[1] Ձ. զտառէ գիրք
[2] Ձ. շրն.
[3] Ձ. թառամ
[4] Ձ. Յոհոնանու
[5] Ձ. շրն.
[6] Ձ. տ տղմ.
[7] Ձ. քա տղմ. նօտրգ.
[8] Ձեռագրում 46, 47, 48 էջաթիւերը սխալմամբ կրկնուած են։
[9] Ձ. չար ոգիք, ա տղմ.